

Հայ 246

# ՅԱՆԴԵՍ ԱՄՍՈՐԵԱՅ

## ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԵՐԹ

Թիւ 1, 2

ՅՈՒՆՈՒԱՐ—ՓԵՏՐՈՒԱՐ

ԽԲ. ՏԱՐԻ 1928

† ԳԵՐ. Հ. ԹԱԴԵՈՍ Թ. Ա. ԹՈՐՆԵԱՆ

Ճերունազարդ թագակիրը յետ երկարատեւ հիւանդութեան հանգեատ խաղաղութեամբ ի Տէր եւ քարի անուամբ յաւելաւ առ Հարս ոթսունեւութամեայ՝ 5 Յունուար 1928:

Աստոն Թոռնեան — այսպէս կը կոչուէր Հանգուցելոյն աշխարհիկ անունը — ծնաւ ի Զմիւռնա 3 Հոկտեմբեր 1843: Մետասանամեայ մանուկ մատաղ առաքեցաւ Վիեննա, Միհիթարեանց վանքը, որ նախապէս ընդունուած էր իր երիցագոյն եղբայրը Պողոս (յետոյ Հ. Պողիկարպոս, † 1 Հոկտեմբեր 1883) եւ որ կը ծաղկէր իր հօրեղբայր՝ Հ. Սահակ Ժ. Վ. Թոռնեան († 2 Յունուար 1898): 24 Օգոստոս 1859 ուխտադրութեամբ անդամակցեցաւ Միաբանութեան: Փայլուն ընթացաւարտ հրդական Գեր. Հ. Այտնեանի կոչուեցաւ վերստին Վիեննա: Մեծ Քերականին մանուամբ հովուէ զրկուած Միաբանութեան իքրեւ ընդհանուր կառավարիչ ստացաւ հովուական գաւազան եւ վեց տարի շարունակ վարեց Միաբանութեանս ճակատագիրը: 19 Յուլիս 1909 զումարուած ընդհանուր ժողովը երբ Գեր. Հ. Գովրիկեանն ընտրեց ընդհանուր Աքբայ Միաբանութեանս, Թոռնեան յանձնեց իր ծանր ու պատուաբեր պաշտօնը նորընտիր Աքբային, 1917—1920 թուականներուն սակայն վերստին անուանուեցաւ խորհրդական Գեր. Գովրիկեանի, ու յետոյ՝ ի յարգանս յառաջացած տարիքին, հանգստեան կոչուեցաւ:



բարձրագոյն ուսումնաշըրջանի՝ 9 Մայիս 1861 ճեռնադրուեցաւ քահանայ: Ուսուցանելու ու կառավարելու արտակարգ իր կարողութիւններով բարձրացաւ պաշտօնէ պաշտօն. կարգուեցաւ ուսուցիչ աստուածաբանութեան, յետոյ վարիչ կղերանոցին եւ ապա մեծատր Զմիւռնիոյ և Կ. Պոլտոյ վանատուներուն, մինչեւ ընտրուելով խորհրդական Գեր. Հ. Այտնեանի կոչուեցաւ վերստին Վիեննա: Մեծ Քերականին մանուամբ հովուէ զրկուած Միաբանութեան իքրեւ ընդհանուր կառավարիչ ստացաւ հովուական գաւազան եւ վեց տարի շարունակ վարեց Միաբանութեանս ճակատագիրը: 19 Յուլիս 1909 զումարուած ընդհանուր ժողովը երբ Գեր. Հ. Գովրիկեանն ընտրեց ընդհանուր Աքբայ Միաբանութեանս, Թոռնեան յանձնեց իր ծանր ու պատուաբեր պաշտօնը նորընտիր Աքբային, 1917—1920 թուականներուն սակայն վերստին անուանուեցաւ խորհրդական Գեր. Գովրիկեանի, ու յետոյ՝ ի յարգանս յառաջացած տարիքին, հանգստեան կոչուեցաւ:

Հ. Թոռնեան որքան ալ ստիպուած էր արտաքին ու վարչական գործերու ի սպաս. դնել իր մտքի ու կամքի կարողութիւնները, սակայն եւ այնպէս չթերացաւ գոհացում տալ նաեւ գրչով իր ժամանակին գրական պահանջներուն: Իր պատրաստած երկատոր «Հատընտիր ընթերցուածք» (Ա. հտր., Ա. տպ. 1866, Բ. տպ. 1891 եւ Բ. հտր. 1910) մասնաւրապէս հանրածանօթ են եւ կը ներկայացընեն բանասիրական քննադատական արժէք: Առանց գիտական կազմածի հրատարակուած, ինչպէս նաեւ տակաւին անտիպ դասական քնազիրներու մէջէն իր հաւաքած լաւագոյն էջերը ընթերցանութեան՝ օժտած է Թոռնեան գիտական կազմածով: Թարգմանածոյ քնազիրներու մէջ սպրդած քազմաթիւ վրիպակներ ուղղած է յոյն նախաքնազիրներու համեմատութիամբ, իսկ ինքնազիր քնազիրներու կրած աղաւաղումները՝ ձեռագրական քաղդատութեամբ (Ա. հտր., էջ 8). յոյն քնազիրներու համեմատութեամբ փորձած է ցոյց տալ ստէպ հայ դասական լեզուի առանձնայատկութիւններն ու ասացուածները (էջ 6), ինչպէս նաեւ մաշթոցեան հայերէնի կանոններուն միութիւնը շեշտելու համար հաւաքած է ինամով եւ ի մի ամփոփած դասական գրականութենէն նոյնաճեւ կամ նմանակերպ դարձուածներ “զի ի քազմաց ընդ միմեանս կշռեալ համեմատութենէ՝ կանոնացն միութիւն ընծայեսցի” (էջ 7): Կրկին հատորներու յառաջաբաններուն մէջ դասական հայ լեզուի յատկութիւններու եւ դասաւրման մասին տրուած տեղեկութիւնները, ինչպէս նաեւ հրատարակուած քնազիրներու ստորեւ գրեթէ ամէն էջի վրայ զետեղուած քերականական ու մեկնաբանական ծանօթութիւնները իսկապէս կ'արդարացընեն իրեն տրուած “դասական հայերէնի հոյակապ ուսուցիչ” անունը (տես Հանդ. Ամս. 1920, էջ 271): “Հանդէս Ամսօրեայ, ի ընթերցողներու համար այնքան հետաքրքրական չեն Թոռնեանի կրօնական քովանդակութեամբ լոյս ընծայած հայերէն ու գերմաններէն ինքնազիր ու թարգմանածոյ աշխատասիրութիւնները:

Թոռնեան քաջահմուտ քազմալեզու էր, կրնար խօսիլ անսայքած ու գրել անսխալ նոր յունարէն, իտալերէն, ֆրանսերէն, գերմաններէն ու թուրքերէն եւ գիտէր հիմնովին դասական յունարէն ու լատիններէն: — Մասնաւրապէս լեզուի արտակարգ այս ձերքով է որ յաջողած էր Թոռնեան դիւանազիտական քարձը շրջանակներու մէջ մուտ գործել ու գրաւել որոշ դիրք ու գիտէր, ի պահանջել հարկին, ճոխօրէն օգտագործել իր հեղինակութիւնը՝ ի նպաստ իրեն քարեխօսութեան դիմող ազգայիններու: Յատկապէս վիեննահայ գաղութի անդամներէն շատերը երախտագիտութեամբ կը յիշեն Թոռնեանի միջնորդութեան ոյժը:

ԽՄԲ. “ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ”